Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 30 -ի N 875 - Ա
որոշման

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կրթական պետական համակարգի դպրոցներին և նախադպրոցական հաստատություններին դպրոցական և նախադպրոցական գույքի տրամադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ դպրոց հիմնադրամ (Armenia School Foundation – USA,) իրավաբանական հասցեն՝ ք. Գլենդել, Սան ֆերնանդո փողոց 3628, Կալիֆորնիա, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայ դպրոց» հիմնադրամ (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Բաղրամյան 17, գործունեության հասցեն՝ քաղ. Երևան, Վերին անտառային փողոց, 127/2 շենք, բն. 6, ՀՎՀՀ՝ 02566785)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Արցախի Հանրապետության շրջաններում՝ կրթության բնագավառում:
6.	Ծրագրի բյուջեն	Ներկայացվող ծրագրի համար բյուջեն կազմում է 125,000,000 դրամ: Առաջին փուլում՝ 2021 թվականի հունվար – 2022 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում (հումքի գնում, գույքի արտադրություն, բաշխում) արժեքը կազմում է 44,000,000 դրամ: Ծրագրի երկրորդ փուլում՝ 2023 թվականի հունվար - 2023 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում, /գույքի արտադրություն, բաշխում / ծրագրի արժեքը կազմում է 22,000,000 դրամ: Ծրագրի երրորդ փուլում՝ 2024 թվականի հունվար - 2025 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում / հումքի գնում, գույքի արտադրություն, բաշխում / ծրագրի արժեքը կազմում է 44,000,000 դրամ: Ծրագրի ընդհանուր արժեքի 12 տոկոսը՝ 15,000,000 դրամ կտրամադրվի կազմակերպական ծախսերին:

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ և ԱՀ հանրակրթական համակարգի դպրոցները և նախադպրոցական հաստատությունները: Սույն ծրագրով նախատեսվում է գույքով ապահովել շուրջ 100 դպրոց և մանկապարտեզ: Դպրոցները և նախադպրոցական հաստատությունները կընտրվեն «Հայ դպրոց» հիմնադրամի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ մշակված ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում՝ ելնելով դպրոցների և նախադպրոցական հաստատությունների կարիքավորության աստիճանից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հունվարի 10-ից 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Հայ դպրոց » հիմնադրամի ծրագրի տևողությունը կազմում է հինգ տարի: Հիմնադրամի ֆոնդը ներկայացվող ծրագրի համար կազմում է՝ 125,000,000 դրամ: Ծրագրով նախատեսվում է դպրոցական և նախադպրոցական գույքի պատրաստում. 2500 միավոր (1 միավորը՝ 1 դպրոցական սեղան և 2 աթոռ) դպրոցական սեղան-աթոռներ 300 հատ ուսուցչական սեղաններ 300 հատ ուսուցչական աթոռներ 300 հատ գրատախտակներ 180 հատ դպրոցական գրապահարաններ 100 միավոր (1 միավորը՝ 1 նախադպրոցական սեղան և 4 աթոռ) նախադպրոցական սեղան-աթոռներ 70 հատ (8 տեղանոց) նախադպրոցական պահարաններ 250 հատ (8 տեղանոց) դպրոցական կախիչներ Ծրագրի առաջին փուլում 2021 թվականի հունվար – 2022 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում, 10,000,000 դրամ նախատեսվում է հումքի՝ MDF-ի, մետաղյա պրոֆիլների, ներկի, գամերի և այլի գնման համար, 31,500,000 դրամ գույքի պատրաստման համար /կապալառուների հետ պայմանագրեր/: Գույքը արտադրվելու է հայաստանյան կապալառու ձեռնարկությունների միջոցով: Ծրագրի երկրորդ փուլում 2023 թվականի հունվար – 2023 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում, 22,000,000 դրամ նախատեսվում է գույքի պատրաստման համար /կապալառուների հետ պայմանագրեր/: Գույքը արտադրվելու է տեղի կապալառու ձեռնարկությունների միջոցով: Ծրագրի երրորդ փուլում 2024 թվականի հունվար – 2025 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում, 10,000,000 դրամ նախատեսվում է հումքի՝ MDF-ի, մետաղյա պրոֆիլների, ներկի, գամերի և

		այլի գնման համար, 31,500,000 դրամ գույքի պատրաստման համար /կապալառուների հետ պայմանագրեր/: Գույքը արտադրվելու է հայաստանյան կապալառու ձեռնարկությունների միջոցով: Ծրագրի ընդհանուր արժեքից 5,000,000 դրամ նախատեսվում է գույքի տեղափոխումն ու բաշխումը իրականացնելու համար (բեռնատար մեքենաների վարձավճար, վառելանյութ): Ծրագրի ընդհանուր արժեքից՝ 15,000,000 դրամ կտրամադրվի կազմակերպական ծախսերին:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. փայտյա հումքի ձեռքբերում՝ MDF –ի ձեռքբերում՝ 12,500,000 դրամ 2. մետաղյա պրոֆիլների ձեռքբերում՝ 6,000,000 դրամ 3. ներկի, գամերի և այլնի ձեռքբերում՝ 1,500,000 դրամ 4. պայմանագրերի կնքում՝ գույք պատրաստող կապալառու ձեռնարկությունների հետ՝ 85,000,000 դրամի չափով՝ գույքի հետևյալ միավորների համար 4. 1 2500 միավոր (1միավորը՝ 1 դպրոցական սեղան և 2 աթոռ) դպրոցական սեղան-աթոռներ: Յուրաքանչյուր միավորի համար՝ 22,500 դրամ: 4. 2 300 հատ ուսուցչական սեղան: Յուրաքանչյուրի համար՝ 16,350 դրամ : 4. 3 300 հատ ուսուցչական աթոռ: Յուրաքանչյուրի համար՝ 10,200 դրամ: 4. 4 300 հատ գրատախտակ: Յուրաքանչյուրի համար՝ 16,850 դրամ: 4. 5 180 հատ դպրոցական գրապահարան: Յուրաքանչյուրի համար՝ 45,000 դրամ: 4. 6 100 միավոր (1 միավորը՝ 1 սեղան և 4 աթոռ) նախադպրոցական սեղան-աթոռներ: Յուրաքանչյուրի համար՝ 36,520 դրամ : 4. 7 70 հատ նախադպրոցական պահարան (8 տեղանոց): Յուրաքանչյուրի համար՝ 20,400 դրամ : 4.8 250 հատ դպրոցական կախիչ (8 տեղանոց): Յուրաքանչյուրի համար՝ 10,200 դրամ : 5. գրասենյակի վարձակալության ծախսեր՝ 2,150,000 դրամ 6. կապի և հաղորդակցության ծախսեր՝ 425,000 դրամ 7. գովազդային աշխատանք (ցուցատախտակների պատրաստում)՝ 125,000 դրամ: Ծրագրի ընդհանուր արժեքից 5,000,000 դրամ նախատեսվում է գույքի տեղափոխումն ու բաշխումը իրականացնելու համար (բեռնատար մեքենաների վարձավճար, վառելանյութ) :
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական գումարը նախատեսվում է ծրագրի ընդհանուր արժեքի 12 տոկոսը, որը կազմում է 15,000,000 դրամ: Այս գումարը, ըստ կազմված նախահաշվի, պետք է օգտագործվի հետևյալ ծախսերի համար.

		- աշխատակազմի վարձատրություն (ներառյալ օրենքով սահմանված հարկերի վճարումներ) - 11,550,000 դրամ - գրասենյակի վարձակալության ծախսեր - 2,150,000 դրամ - ՀՀ մարզեր և ԱՀ գործուղման ծախսեր - 750,000 դրամ - կապի և հաղորդակցության ծախսեր - 425,000 դրամ - գովազդային աշխատանք (ցուցատախտակների պատրաստում) -125,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման շրջանակներում հիմնադրամը համագործակցելու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների հետ, ինչպես նաև մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը իրականացվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ